ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մատթեոս Ուռհայեցին (XII դ. առաջին կես) իր «Ժամանակագրության» մեջ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի X—XI դդ. քաղաքական կյանքի, հարևան երկրների հետ ունեցած հարաբերությունների և այլ հարցերի վերաբերյալ։ Դրանց թվում կան այնպիսիք, որոնք չափազանց արժեքավոր են որպես առանձին կարևոր հարցերի քննության միակ աղբյուր։ Այդպիսին են, օրինակ, X դ. երկրորդ կեսի հայոց պատմությանն առնչվող մի քանի հետաքրքիր տեղեկություններ՝ կապված Աշոտ III-ի (953—977) գահակալության շրջանի հետ։ Դրանցից առաջինում պատմվում է 961 թ. հայոց մայրաքաղաքը Անի տեղափոխելու մասին, որի առթիվ կազմակերպվել էին մեծ հանդիսություններ։ Պատմիչի հաղորդմամբ՝ Աշոտ III-ը Անիում օծվեց հայոց թագավոր։ Այդ առթիվ հրավիրված էին «ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց» և «լինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց», իսկ Հայաստանի հարևան երկրները «տուրս և սէրս հանդերձ պատուական ընծայիւք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեանն»[1]։

Մյուս հաղորդումը վերաբերում է Աշոտ III-ի և բյուզանդական կայսր Հովհաննես Զմշկիկի (969—976) հարաբերություններին։ Պարզվում է, որ 974 թ. Ասորիք արշավելիս Զմշկիկը մտել է նաև Հայաստան և հասել մինչև Տարոն՝ կանգ առնելով Այծեաց բերդի մոտ՝ Մշո շրջակայքում։ Կայսեր հետագա առաջխաղացումը կանխելու նպատակով Աշոտ III-ը մեծ զորքով նրան ընդառաջ է գնացել և ճամբար դրել Հարք գավառում։ Մատթեոս Ուռհայեցու այս հաղորդումն անգնահատելի է ոչ միայն X դ. երկրորդ կեսի հայ-բյուզանդական հարաբերությունների ընթացքը, այլև Հայոց թագավորության այդ ժամանակաշրջանի պետական կառուցվածքը լուսաբանելու առումով։

Բագրատունյաց ժամանակաշրջանի վասալա-սյուզերենական հարաբերությունների քննությանը նվիրված մեր հոդվածներից մեկում նշել ենք, որ այդ շրջանում հայկական պետությունը միջնադարյան ֆեոդերացիա էր։ Այն առաջացել էր Բագրատունիների, Արծրունիների, Սյունիների և այլ ֆեոդալական տների ու նրանց կրտսեր ճյուղերի դաշնակցային միության շնորհիվ։ Խոշոր ֆեոդալները (տարբեր տների գահերեցները) վասալական կապերով համախմբված էին Բագրատունիների գլխավոր (Շիրակի) ճյուղի գահերեցի շուրջ, որն իշխում էր «Հայոց թագավորի» իրավունքով։ Վերջինս «ուխտերի» ու «դաշինքների» (համաձայնագրերի կամ դաշնագրերի) միջոցով համախմբել էր հայ ֆեոդալներին, որոնք թագավորի հանդեպ կատարում էին «ծառայութիւն» (վասալական պարտականություն)։ Այդ եղանակով երկու կողմերի միջև հաստատվել էին փոխադարձ պարտականություններով երաշխա-

---

[1] *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 3, 4։*

վորված դաշնակցային կապեր։ Թագավորական իշխանությունը կատարում էր դաշնակցային կամ ֆեդերատիվ կենտրոնի դեր, իսկ պետությունը, ինչպես ասվեց, դաշնակցային միություն էր՝ ֆեդերացիա[2]։

Ահա այդ ֆեդերացիայի անդամներին է հանվանե հիշատակում Մատթեոս Ուռհայեցին՝ Զմշկիկ կայսեր 974 թ. արշավանքի կապակցությամբ. «Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից[3] Գուրգէն, Արաս Կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձեւացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու. և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրև ութսուն հազար։ Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Զմշկանն...»[4]։ Զմշկիկը տեսնելով, որ Աշոտ III-ը պատրաստվել է դիմադրել իրեն, գերադասում է բարեկամական բանակցություններ վարել նրա հետ։ Նրանց միջև կնքվում է դաշինք, որի համաձայն Հայոց թագավորը կայսրին տալիս է 10 հազարանոց օգնական զորամաս[5]։

Պատմիչի վերոհիշյալ տողերում թվարկված են հայ ավատատիրական ավագանու գլխավոր ներկայացուցիչները՝ Հայաստանի խոշոր իշխանական տների գահերեցները, որոնց մի մասը իրենց երկրամասերում՝ Վասպուրականում[6], Սյունիքում (Կապան), Տաշիր-Զորագետում, Վանանդում իշխում էր տեղական թագավորների իրավունքներով։ Մի մասն էլ հայրենատեր իշխան էր (Սասունի, Անձևացիքի տները և այլք)։ Նրանք միասին կազմում էին «ամենայն տունն Հայոց», որը գլխավորում էր «Շիրակի տունը»[7] ի դեմս Աշոտ III-ի։ «Ամենայն տունն Հայոցը» հայ պետականությունն է X—XI դդ.։ Այդ շրջանի

---

2 Ռաֆայել Մաթևոսյան, Վասալա-սյուզերենական հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում X—XI դդ. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 10, էջ 46—54)։

3 Նկատի ունի Տաշիր-Զորագետը։

4 Մատթեոս Ուռհայեցի, էջ 17։

5 «...է տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց և այր պատերազմողս իրրեւ տասն հազար» (նույն տեղում, էջ 18)։

6 Վասպուրականում սկսած 968 թ. իշխում էին Աբուսահլ-Համազասպի երեք որդիները՝ Աշոտ-Սահակը, Գուրգենը և Սենեքերիմը։ 974 թ. զորահավաքին Վասպուրականից մասնակցում էին Գուրգենն ու Սենեքերիմը։ 1003 թ. եղբայրների մահից հետո Սենեքերիմը Վասպուրականում թագավորում է միայնակ (Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 181, 183, 191, 196)։

7 «Շիրակի տունը» Բագրատունյաց տոհմի ներսում որպես ինքնուրույն ճյուղ ձևավորվեց X դ. կեսերին, երբ Աշոտ III-ը Վանանդից տեղափոխվեց Շիրակ և այնտեղ հիմնեց պետության մայրաքաղաքը (Անին)։ Այդ շրջանից էլ աղբյուրները հիշատակում են «Շիրակի տունը»։ 967 թ. վայոցձորցի Մեսրոպ քահանան իր հիշատակարանում գրում է. «Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց թագաւորի ի տանեն Շիրակայ» (Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 123)։ 974 թ. Աշոտ III-ի դեսպան Ղեոնդ վարդապետը Կ. Պոլսում բանակցություններ վարեց կայսեր հետ և «գնաց մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Հայոց ի մեծ տունն Շիրակայ» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 29)։ Սրանք հայ մատենագրության մեջ «Շիրակի տան» առաջին հիշատակումներն են։ Սովորաբար պատմագիտության մեջ Շիրակի ճյուղ են անվանում Աշոտ Մսակերի և նրա անմիջական հաջորդների՝ Սմբատ սպարապետի ու Աշոտ I-ի իշխանապետությունը (Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 492 և այլն)։ IX դ. համար այդպիսի անվանումը վաղաժամ է, այդ

հայ պետականությունն աղբյուրներում հիշվում է նաև որպես «Հայոց թագավորություն»[8], «ամենայն տունն Հայոց»[9]։ «Ամենայն տունն Հայոցը», ինչպես երևում է Մատթեոս Ուռհայեցու վկայությունից, նշանակում է Շիրակի տուն+Արծրունյաց տուն+Սյունյաց (Կապանի) տուն+Կարսի տուն+Տաշիր-Զորագետի տուն+Անձևացյաց տուն+Սասունի տուն+և այլն։ X դ. խոշոր իշխանական տների գահերեցներից ոմանք հասել էին թագավորական աստիճանի և հիմնել ինքնուրույն թագավորություններ, բայց վասալական կապերով կապված էին Բագրատունի գահերեցի հետ, որը ճանաչվում էր «Հայոց թագավոր»։ Ըստ այնմ, X—XI դդ., ինչպես երևում է 974 թ. Աշոտ III-ի գլխավորած զորահավաքի օրինակով, «Հայոց թագավորությունը», որպես «ամենայն տունն Հայոցի» հոմանիշ, նշանակում է Բագրատունյաց (կենտրոնական) թագավորություն+Արծրունյաց թագավորություն+Սյունյաց թագավորություն+Կարսի թագավորություն+Տաշիր-Զորագետի թագավորություն+Անձևացյաց իշխանություն+Սասունի իշխանություն (մինչև 968 թ. նաև Տարոնի իշխանություն)+և այլն։ Այսպիսով, «ամենայն տունն Հայոցն» ընդգրկում էր Հայաստանի այն մասը, որտեղ IX—XI դդ. առաջացել էր քաղաքականապես անկախ հայկական պետություն։ Նրա հոմանիշն է «տուն Հայաստանեայս» արտահայտությունը[10]։ «Տուն Հայոց» կարող էր նշանակել ընդհանրապես Հայաստան, ինչպես Արիստակես Լաստիվերտցու մոտ[11]։ Ընդորում, այդ տերմինն Արիստակես Լաստիվերտցին գործածում է նաև ավելի նեղ իմաստով՝ միայն Հովհաննես-Սմբատի բաժին տիրույթները նշելու համար[12]։ Մատթեոս Ուռհայեցին մեկ այլ դեպքում «ամենայն տունն Հայոց» ասելով նկատի ունի Կապադովկիայում Գագիկ II-ի շուրջ համախմբված հայ ավատատերերին՝ Գագիկ Կարսեցուն, Սենեքերիմ Արծրունու որդիներ Ատոմին ու Ապուսահլին և ուրիշների[13]։ Վերջին վկայությունը նշված արտահայտությունն իմաստավորելու մասնակի օրինակ է։ Հիմնականում պատմիչների մոտ այդ դարձվածքը բնորոշում է X—XI դդ. հայ պետականությունը, ինչպես ասված է Մատթեոս Ուռհայեցու մոտ՝ Գագիկ II-ի խոսքերով, ուղղված կայսր Մոնոմախին. «տէր և թագաւորն ես եմ տանն Հայոց. ահա ես ոչ տաց

շրջանում (Աշոտ Մսակերից մինչև Աշոտ I-ը) Բագրատունյաց ոստանի կենտրոնը եղել է Արշարունիքը («Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊբ, 1887, էջ 106, «Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 143)։ X դ. առաջին կեսին Բագրատունիների կենտրոնը նախ տեղափոխվել է Շիրակ, ապա Վանանդ և միայն Աշոտ III-ի օրոք վերջնականապես հաստատվել Շիրակում։ IX—X դդ. սկզբի համար Աշոտ Մսակերի վերոհիշյալ ջառավիղը թերևս ավելի ճիշտ է անվանել Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղ (հմմտ. Գ ն ել Գ ր ի գ ո ր յ ա ն, Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դ. 50—70-ական թվականներին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 2, էջ 76)։

8 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 25, Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 94, 154։

9 «...օծին զԳագիկ (Գագիկ II—Ռ. Մ.) թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց» (Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 86, հմմտ. նաև էջ 10, 17—18, 97, 153)։

10 Մատթեոս Ուռհայեցին Գագիկ II-ի մասին (էջ 86—87) գրում է. «...օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց», «սա (Գրիգոր Մագիստրոսը—Ռ. Մ.) թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայց», հմմտ. նաև էջ 76։

11 Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 49, 68։

12 Նույն տեղում, էջ 80։

13 Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 220։

ղՀայք ի ձեռս քո»[14]։ Այդ պետականության քաղաքական կենտրոնը X դ. կեսերին դարձավ Անին, որն Աշոտ III-ի գահակալության շրջանից սկսած կոչվեց «թագաւորանիստ քաղաք Հայոց»։ Պատմելով Աշոտ III-ի թագավորության մասին, Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Եւ յայնմ աւուր եղեւ ժողով ահագին և մեծ ի քաղաքն յԱնի, որ եղեւ այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց»[15]։ Այն կոչվում էր նաև «մայրաքաղաք Հայոց»[16], «թագավորաբնակ քաղաք»[17]։ Նման անվանումներն արտացոլում են քաղաքական այն ստատուտը, որն Աշոտ III-ի ձեռնարկի շնորհիվ ստացավ Անին՝ որպես պետության մշտական կենտրոն։ Մայրաքաղաք ընտրելով Անին, Աշոտ III-ը վերջ տվեց պետության վարչական կենտրոնների շարունակ կրկնվող տեղափոխումներին, Անին դարձրեց Հայոց թագավորի միակ նստավայրը, այնտեղ կենտրոնացնելով արքունի գործակալությունները[18]։ Անիում էր հաստատվել նաև կաթողիկոսի աթոռը, որն այդ ժամանակվանից ավանդական «աթոռ կաթողիկոսութեան Հայոց» անվանը զուգահեռ կոչվում էր նաև «աթոռ հայրապետական տանն Հայոց»[19]։ Անին, որպես «ամենայն տունն Հայոցը» գլխավորող շահնշահի նստավայր, միջնադարյան քաղաքական կազմակերպության (ֆեդերացիայի) շրջանակներում միաժամանակ և՛ Բագրատունյաց, և՛ համահայկական մայրաքաղաք էր։ Այս առումով Հ. Օրբելին վրիպել է՝ Անին չհամարելով ամբողջ Հայաստանի մայրաքաղաք[20]։

Մատթեոս Ուռհայեցու վերոհիշյալ վկայություններն արտացոլում են Հայաստանի մասնատվածության ժամանակաշրջանի քաղաքական կառուցվածքը, երբ Հայոց թագավորությունը մասնատված ֆեոդալական միապետություն էր։ Այդ վկայությունները կապող օղակ են նախորդ՝ մինչանիական (885—961) և հետագայի՝ XI դ. հայկական պետականության կառուցվածքը, նրա աստիճանական զարգացումը հասկանալու և բացատրելու համար։ Քննության առնված տերմինները («ամենայն տունն Հայոց» և մյուսները) նույն հեղինակի մոտ հանդիպում են նաև XI դ. քաղաքական անցքերը շարադրելիս։ Գագիկ I-ի որդիների՝ Հովհաննես-Սմբատի ու Աշոտի, գահակալական պայքարի և նրանց միջև կայացած համաձայնության մասին պատմիչը գրում է, որ կաթողիկոս Պետրոսը, Բագրատունիք և Պահլավունիք «ելին առ Աշոտ և մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, և Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի. և եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն տանն Հայոց։ Եւ յայնժամ եղեւ խաղաղութիւն ամենայն աշխարհին Հայոց»[21]։ Այս հատվածում «թագաւոր ամենայն տանն Հայոց» արտահայտությունը ցույց է տալիս, որ Աշոտ IV-ին ենթակա էին մի շարք «տներ»՝ ֆեոդալական իշխանապետու-

---

14 Նույն տեղում, էջ 95։

15 Նույն տեղում, էջ 3—4։

16 Նույն տեղում, էջ 211։

17 Նույն տեղում, էջ 85։ Ավանդաբար Անին այդպես էր կոչվում նաև XI դ. հայկական պետականության անկումից հետո (հմմտ. Մատթեոս Ուռհայեցի, էջ 146, 221, 229, 359, 421, 426)։

18 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 5, էջ 89—94։

19 Մատթեոս Ուռհայեցի, էջ 33, 153։

20 И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. I.

21 Մատթեոս Ուռհայեցի, էջ 10։

թյուններ[22], որոնց վրա նա թագավորում էր վասալիտետի միջոցով։ Նույն նախադասությունում երկրորդ անգամ հիշատակված «ամենայն տունն Հայոցն» արտացոլում է հաշտության այն պայմանը, որի համաձայն Հովհաննեսից հետո երկուսի բաժինները միավորվելու էին։ Աշոտը ստանալու էր Հովհաննեսի բաժինը Անիով և նրան էին ենթարկվելու Հայաստանի բոլոր խոշոր ֆեոդալական տները։ Երկու դեպքում էլ Մատթեոս Ուռհայեցու մոտ «ամենայն տունն Հայոց» նշանակում է ֆեոդալական տների դաշնակցային միություն. առաջին դեպքում միայն «դրուց աշխարհի» սահմաններում, երկրորդում՝ ամբողջ Հայոց թագավորությունում։

«Ամենայն տունն Հայոցը» չպետք է շփոթել «տուն Հայոց» արտահայտության հետ։ Մատթեոս Ուռհայեցին Հովհաննես-Սմբատի հոգաբարձու Սարգիս Սյունեցուն անվանում է «այր ոմն յիշխանաց տանն Հայոց»[23]։ Պատմիչն այդպես է անվանում նաև Հովհաննեսի վասալներին՝ Պահլավունիների տոհմից։ Նա գրում է, որ Գրիգոր Մագիստրոսը «և այլք ոմանք յազատաց տանն Հայոց», նրանց թվում նաև Սարգիս Սյունեցին, թագավորի հրամանով այցելեցին Կողերն գիտնականին[24]։ Միաժամանակ, Հովհաննես-Սմբատի բաժինը Արիստակես Լաստիվերտցին անվանում է «տունն Շիրակայ»։ Այսպես, օրինակ, խոսելով Սարգիս Սյունեցու մասին, պատմիչը գրում է, որ նա ցանկանում էր «թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որ շուրջ զնովաւ գաւառք»[25]։ Մատթեոս Ուռհայեցին նույնպես շահնշահի գլխավորած ֆեոդալական տունն անվանում է «տուն Շիրակայ», գրելով, որ Կարսի Աբաս և Կյուրիկյան Գուրգեն թագավորները «կային ի հնազանդութիւն տանն Շիրակայ»[26]։

Մեջբերված վկայություններից երևում է, որ «տունն Հայոց» ասելով երկու պատմիչներն էլ նկատի են ունեցել Բագրատունյաց տոհմի ավագ ճյուղը՝ շահնշահների գլխավորած Շիրակի ֆեոդալական տունը[27]։

1045 թ. Բյուզանդիան զավթեց Հովհաննես-Սմբատի բաժինը և այնտեղ նշանակվեցին կայսերական կառավարիչներ։ Նրանցից մեկը Կամենասն էր (Կատակալոն Կեկավմեն), որը, ըստ Արիստակես Լաստիվերտցու, «ունէր դիշխանութիւն տանն Հայոց»[28]։

«Շիրակի տան»՝ հանդես գալը որպես «Հայոց տան», արտացոլում է այն գերիշխող դիրքը, որ ուներ Բագրատունյաց գահերեցների քաղաքական կազմավորումը ֆեդերատիվ պետության շրջանակներում։ Նա էր գլխավորում հայկական ավատատիրական տների դաշնակցությունը, հայ պետականությունը։ Նրա գահերեցներն էին կրում «Հայոց թագավորի» տիտղոսը և հայկական մյուս տեղական թագավորների համեմատ ճանաչված էին «առաջին

---

22 Դրանցից էին օրինակ, Պահլավունիների այն ճյուղը, որի ներկայացուցիչն էր Հայոց իշխան Ապիրատը՝ սպարապետ Հոլում Վասակի եղբայրը, մյուսը՝ Շատիկ բերդի տերը (Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 10, «Մ խ ի թ ա ր ա յ Ա ն ե ց ւ ո յ Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն», ՍՊբ, 1879, էջ 52, Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 27)։

23 Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 84։

24 Նույն տեղում, էջ 67։

25 Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 57։

26 Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 10։

27 Հմմտ. Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 15։

28 Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 80։

թագավորացն»[29]։ Այս արտահայտությունը համապատասխանում է լատինական «primus inter pares» («առաջինը հավասարների մեջ») արտահայտությանը, որը ցույց է տալիս գերագույն սյուզերենի գիրքն ավատատիրական աստիճանակարգում։

Մեր պատմագիտության մեջ վաղ միջնադարի Հայոց թագավորությունն իշխող դինաստիայի անունով իրավացիորեն անվանվում է «Արշակունյաց թագավորություն», որովհետև այն միասնական պետություն էր, նախարարությունների ցանց կամ ամբողջություն։ Արշակունյաց թագավորությունը կարելի է պատկերացնել որպես մեկ խոշոր նախարարություն, որը բաժանվում էր մի քանի տասնյակ իշխանությունների։ Նախարարությունը միաժամանակ երկրի վարչական կառավարման սիստեմ էր[30]։ Մինչդեռ ֆեոդալական մասնատվածության շրջանի համար այդ բանը չի կարելի ասել։ Այդ շրջանում «Հայոց թագավորությունն» ավելի լայն հասկացություն էր, քան «Բագրատունյաց թագավորությունը»։ Առաջինի կազմի մեջ ընդգրկված իշխանապետություններից մի քանիսը՝ Բագրատունյաց (գլխավոր ու կրտսեր), Արծրունյաց, Կապանի (Սյունյաց) դարձել էին ինքնուրույն մեծ ու փոքր թագավորություններ, այդ պատճառով էլ X—XI դդ. Հայոց թագավորությունը ոչ թե միասնական, այլ մասնատված պետություն էր, որի առանձին քաղաքական կազմավորումները (թագավորությունները) համախմբված էին գլխավորի (Բագրատունյաց կենտրոնականի) շուրջ՝ դաշնագրային կապերով, կազմելով թագավորությունների (և խոշոր իշխանությունների) դաշնակցային պետություն կամ ֆեդերացիա, որը Մատթեոս Ուռհայեցին անվանում է «ամենայն տունն Հայոց»։

Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում պետական կառուցվածքի առանձնահատկությունը խիստ կարևոր է մասնատվածության պրոցեսը ճիշտ բացատրելու համար։ Բանն այն է, որ որոշ հեղինակների (Լեո, Հ. Հարությունյան, Ս. Պողոսյան) կարծիքով X դ. 60-70-ական թվականներին տեղական թագավորությունների առաջացումը (Սյունյաց, Կարսի և Կյուրիկյան) կատարվել է ի հաշիվ Բագրատունյաց (կամ Անիի) թագավորության մասնատման, նրանից անջատվելու միջոցով[31]։ Այդ տեսակետը բոլոր թագավորություններին տարածելի չէ, քանի որ հաշվի պետք է առնել երկու կարևոր հանգամանք՝ երկրի պետական կառուցվածքը և խոշոր հայրենատեր ավատատերերի հողատիրության իրավունքը։ Քանի որ քննվող ժամանակաշրջա-

---

29 Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ Աշոտ III-ը «ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց ազգիս» (էջ 4)։ Մի այլ տեղ նա գրում է, որ Սարգիս Սյունեցին հափշտակել էր «զգանձատունն առաջին թագաւորացն Հայոց» (էջ 84)։ Անիում գտնվում էր «ամենայն Հայոց առաջին թագաւորաց» տապանատունը, որտեղ թաղված էր նաև Աշոտ IV-ը (էջ 79, 97), հմմտ. Արիստակես Լաստիվերտցի, էջ 62, «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1911, էջ 285, 328։

30 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 298, 453, 462; А. Сукиасян, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, Ереван. 1963, с. 95, 206, 232, Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960, էջ 62։

31 Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 578, 591, Հ. Հարությունյան, Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959, էջ 97, 98, 106, Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 53, 54։

նում հայ պետականությունը գլխավորում էր Բագրատունի գահերեցը, որին բոլոր հայ խոշոր ավատատերերը ճանաչում էին որպես հայոց թագավոր, ապա նշված հեղինակներից վերջին երկուսը Բագրատունյաց թագավորությունը նույնացրել են Հայոց թագավորության հետ[32]։ Նկատի չի առնվել, որ հայոց թագավորի տիտղոսը կրող Բագրատունի գահերեցը գլխավորել է երկու քաղաքական կազմավորումներ՝ Բագրատունյաց կենտրոնականը՝ Անի մայրաքաղաքով (Շիրակի տուն) և «ամենայն տունն Հայոցը»՝ մի քանի ավատատիրական տների դաշնակցային միությունից կազմված Հայոց թագավորությունը։ Այդ պատճառով էլ մասնատվածության պրոցեսը բացատրելիս վերոհիշյալ հեղինակները վրիպել են, յուրաքանչյուր տեղական թագավորության առաջացումը համարելով Բագրատունյաց թագավորության մասնատում և տրոհում։ Նրանք հաշվի չեն առել այդ թագավորությունների ստատուտը «ամենայն տանն Հայոցի» ներսում, որը պայմանավորված էր հողատիրական իրավունքով։ Սյունիքի ավատատերերը, օրինակ, հայրենատեր հողատերեր էին և նրանց տիրույթները (բացառությամբ Գեղարքունիքի) միացված չէին Բագրատունյաց ոստանին, չէին մտնում նրա մեջ, ուստի Սյունյաց գահերեցի անջատողական ձգտումները կարող էին արտահայտվել ոչ թե Բագրատունյաց թագավորությունից անջատվելու, այլ դաշնակցային միությունից դուրս գալու միջոցով։

Այլ էր Կարսի (Վանանդ-Արշարունիք) և Տաշիր-Զորագետի վիճակը։ Դրանք Բագրատունյաց ոստանի մասն էին կազմում և եթե այդ երկրամասերում տեղական թագավորությունների առաջացումը (Կարսի և Կյուրիկյան) լիներ անջատողականության արդյունք, ապա կարելի կլիներ ասել, որ դրանք անջատվեցին Բագրատունյաց թագավորությունից։ Սակայն, ինչպես նշել ենք մեր նախորդ հոդվածներում, դրանց կազմավորումը հետևանք էր Բագրատունյաց արքունիքի քաղաքական վերափոխումների։ Այսպես, օրինակ. Աշոտ III-ը ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող սահմանային մարզերը ենթարկեց Շիրակի տան կրտսեր անդամների իշխանությանը, ճանաչելով նրանց թագավոր[33]։

Այսպիսով, Մատթեոս Ուռհայեցու երկում հայ պետականությանը վերաբերող տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունեն դրանք՝ Հայաստանի X—XI դդ. պատմությունը հետազոտելիս։ Ընդ որում, ոչ պակաս արժեքավոր են նաև XI դ. կեսերին և վերջին (Անիի անկումից հետո) վերաբերող «տունն Հայոցի» հիշատակությունները պատմիչի աշխատության մյուս էջերում[34]։

Վերջում շեշտենք, որ Ուռհայեցին իր երկում հաղորդում է այնպիսի մանրամասնություններ Հայաստանի X—XI դդ. ներքին քաղաքական կյանքի վերաբերյալ, որոնք բացակայում են այլ պատմիչների, այդ թվում նաև Արիստակես Լաստիվերտցու մոտ։

---

32 Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 97, 98, 106, Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 53, 54։

33 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 3, էջ 86—95, 1977, № 1, էջ 74—79, 1978, № 12, էջ 55—60, 1979, № 4, էջ 79—84։

34 Մատթեոս Ուռհայեցի, էջ 146, 148, 151, 220—221։

ГОСУДАРСТВЕННОЕ УСТРОЙСТВО АРМЯНСКОГО ЦАРСТВА ПО СВЕДЕНИЯМ МАТТЕОСА УРhАЕЦИ

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

«Хроника» автора первой половины XII в. Маттеоса Урhаеци содержит ценные сведения, помогающие правильно понять государственное устройство Армении эпохи феодальной раздробленности. Автор «Хроники» поименно перечисляет представителей крупных армянских феодальных домов X—XI вв.—феодальные дома Ширака, Капана (Сюник), Ташир-Дзорагета, Карса, Васпуракана, Андзевацика, Сасуна, которые вместе составляли «аменайн тунн hАйоц»—«дом всей Армении», возглавлявшийся Ширакским домом. Его глава—Багратидокий царь,—признавался верховным сюзереном всеми армянскими владетельными феодалами—удельными царями Васпуракана, Сюника, Карса, Ташир-Дзорагета и крупными князьями; с ним они были связаны вассально-сюзеренными отношениями в рамках «аменайн тунн hАйоца». Последний у Маттеоса Урhаеци называется также Армянским царством. Таким образом, в X—XI вв. Армянское царство—это союзное государство (феодальная федерация), в которое входили Багратидское (главное, с центром в Анн), Васпураканское, Сюникское, Карсское, Ташир-Дзорагетское царства и ряд крупных княжеств. Во главе союзного государства стоял Багратидский царь, являвшийся одновременно царем (шахиншахом) Армении.